

Գիւմրիի երկու բնակիչներ՝ Արթուր Պողոսեան և Արմէն Արոյեան սպանուած են, իսկ երկու այլ անձեր՝ վիրաւորուած, երբ փորձած են մուտք գործել Գիւմրիի մէջ ռուսական պիստոլակաւ խարխուլը: «ԱՅՓ» լրատու գործակալութիւնը յիշատակեց ռուսական պիստոլակաւ աղբիւրէ մը քաղելով իր տեղեկութիւնները յայտնեց, որ խարխուլի պահակներ չընդունուած հրահանգին, պահակներէն մէկը կրակ բացած է անոնց ուղղութեամբ. սպաննելով անոնցմէ երկուքը: Ըստ «ԱՅՓ»-ի, չորս երիտասարդները գինով էին:

## ԻՎԱՆՈՎ ՏԵՍԱԿՅԵՅԱՒ ԱՐԱՅԱԹԻ ՀԵՏ

# ԱՐԻԷԼ ՇԱՐՈՆ ԶԵՌՆԱՐԿԵՑ ԵՐՈՊՊԱԿԱՆ ՇՐՋԱՊՏՈՅՏԻ

Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոն եւրոպական շրջապտոյտի մը ձեռնարկէց երէկ՝ Կորակցութիւն ապահովելու համար պաղեստինցիներուն հետ խաղաղութեան գործընթացին, մինչ պաղեստինցիները կը փորձէին լուծում գտնել Եսաէր Արաֆաթի եւ վարչապետ Մահմուտ Ապպասի միջեւ տարակարծութիւններուն, որոնք միջպաղեստինեան տագնապ մը կը սպառնան: Շարոնի շրջապտոյտին նպատակներէն մէկն է նաեւ համոզել եւրոպացի ղեկավարները, որ պոլոնի եւստրիկեան պաղեստինեան իշխանութեան նախագահ Եսաէր Արաֆաթը: Շարոնի յիշեալ ծրագիրը առաջին հարուածը ստացաւ երէկ, երբ Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Իվանով անտեսելով Իսրայէլի կեցւածքը, Ռամալլայի մէջ հանդիպում մը ունեցաւ Արաֆաթի հետ: Իվանով ըսաւ. որ

Ռուսիա կը պահանջէ արագ կիրարկումը խաղաղութեան ճամբու քարտէսին, որուն հովանաւորներն են Անկուստը: Խօսելով Շարոնի եւրոպական երկիրներ շրջապտոյտին մասին, արտաքին գործոց նախարար Սիլվիո Շալոմ ըսաւ, որ Իսրայէլ - Եւրոպական Միութիւն կապերունորհանգրքուն մը սկսած է: Ան աւելցուց, որ դրական մթնոլորտ մը կը տիրէ փոխ յարաբերութիւններուն մէջ, որ կը նմանի «մեղրալուսինի»: Շալոմ ըսաւ նաեւ, որ եւրոպացիները կը գիտակցին, որ եթէ գործածուի նշանակալի դերակատարութիւն պիտի ունենան պաղեստինեան իսրայէլեան բանակցութիւններուն մէջ, պէտք է որ դեգրեն հաւասարակշռուած մօտեցում մը: Իսրայէլացի պաշտօնատարներ յաճախ ամբաստանած են եւրոպական երկիրները իբրեւ կողմնակալ՝ ի նպաստ արաբներուն:



Արաֆաթ կ'ընդունի Իվանովը

Շարոնի շրջապտոյտին առաջին կայանը Բրիտանիան է, ուր հասաւ երէկ երեկոյեան: Շարոն հանդիպումներ պիտի ունենայ վարչապետ Թոնի Բլեյրի եւ արտաքին գործոց նախարար Ճէք Սթրոնջի հետ: Մեկնումէն քանի մը ժամ առաջ լոյս տեսած հարցազրոյցի մը մէջ, Շարոն շեշտեց, որ եւրոպական երկիրները պէտք է մեկուսացնեն Արաֆաթը, որովհետեւ ան կ'արգելակէ վար-

չապետ Մահմուտ Ապպասի աշխատանքը եւ իշխանութիւնը: Մինչ այդ, պաղեստինցի բարձրաստիճան պաշտօնատարներ կը փորձեն հաշտեցնել Ապպասն ու Արաֆաթը, որոնք տարակարծիք են յատկապէս Իսրայէլի հետ կապերուն եւ պաղեստինցի բանտարկեալներու հարցին շեշտեց, որ եւրոպական երկիրները պէտք է մեկուսացնեն Արաֆաթը, որովհետեւ ան կ'արգելակէ վար-

## ՀԱՍԱԶԱՅՆԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԻ ՀԱՍԱԴՐՈՂ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԳՈՒՄԱՐԵՑ ԻՐ ԸՆԹԱՑԻԿ ՆԻՍՏԸ

Հ. Յ. Դ. Հայաստանի Գերագոյն Մարմինի գրասենեակին մէջ Շաբաթ, 12 Յունիսին տեղի ունեցաւ քաղաքական համաձայնական դաշինքի համադրող խորհուրդի ընթացիկ նիստը: Նիստին մասնակցեցան Հ. Յ. Դ. Հայաստանի Գերագոյն Մարմինի ներկայացուցիչ ընկ. Արմէն Ռուսամեան, Ազգային ժողովի Հ. Յ. Դ. խմբակցութեան ղեկավար ընկ. Լեւոն Մկրտչեան, Հայաստանի Հանրապետական Կուսակցութեան (<<Կ) խորհուրդի նախագահ Անդրանիկ Մարգարեան եւ փոխ նախագահ Տիգրան Թորոսեան, Օրինակ Երկիր Կուսակցութեան (ՕԵԿ) նախագահ Արթուր Պաղտասարեան եւ փոխ նախագահ Մհեր Շահգեղանեան: Նիստին ընթացքին քննարկուած են դաշինքի անդամ կուսակցութիւններու համագործակցութեան հիմնական հարցերը, կուսակցութիւններու ստորագրած յուշագիրի գործադրման խնդիրները, Ազգային ժողովի յառաջիկայ նստաշրջանի օրէնսդրական նախաձեռնութիւններու եւ խորհրդարանական աշխատանքներու համադրման հարցերը, փտածութեան դէմ պայքարի գծով կառավարութեան կողմէ երկու տարիէ ի վեր մշակուող ծրագրի նախագիծը, ինչպէս նաեւ դաշինքի գործունէութեան, հրապարակայնութեան եւ քարոզչութեան առնչուող խնդիրներ: Կողմերը անդրադարձած են նաեւ վերջին շրջանին Հայաստանի մէջ տեղի ունեցած սպանութիւններուն: Այս առումով դաշինքի համադրող խորհուրդը իրաւաստ մարմիններէն պահանջած է գործնական եւ շօշափելի քայլեր՝ արարքներու ծախքերուն բացալայտման համար: Հ. Յ. Դ. ի, <<Կ) եւ ՕԵԿ-ի ներկայացուցիչները յատկապէս արծարծած են փտածութեան դէմ պայքարի ռազմավարութեան ծրագրի քննարկման հոլովոյթը: Որոշուած է ստեղծել աշխատանքային խմբակ մը եւ կազմակերպել հրապարակային քննարկումներ: Նիստին ընթացքին նաեւ ճշդուած է համադրող խորհուրդի ընթացիկ նիստերու կազմակերպման ընթացակարգը եւ յառաջիկայ նիստին օրակարգը:

## ՅԵՏՊԱՏԵՐԱԶՄԵԱՆ ԻՐԱՔԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԻՐ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԸ ԳՈՒՄԱՐԵՑ

Յետպատերազմեան Իրաքի ազգային գործադիր խորհուրդը իր առաջին նիստը գումարեց երէկ: Փոխանցման հանգրուանի իշխող խորհուրդին նիստը ողջունուեցաւ, իբրեւ կարեւոր նուաճում երկիրին վերակառուցման գործընթացին մէջ եւ իբրեւ նախապատրաստական քայլ յառաջիկայ ընտրութիւններուն համար:



25 ներկայացուցիչներէ կազմուած խորհուրդը անդրանիկ նիստը կայացուց Պաղտաստի պիստոլակաւ ճարտարարուեան մէջ: Նիստին ներկայ չէին դաշնակից ճակատին կողմէ պաշտօնատարներ կամ պիստոլակաւներ, սակայն աւելի ուշ, իրաւորուեցան ամերիկեան քաղաքային իշխանութեան ղեկավար Փոլ Պրեմըրը, բրիտանացի պատուիրակի ճոն Մոյլըրը եւ ՄԱԿի մասնաւոր պատուիրակ Սերճին Վիերա Տէ Մելլո, որոնք յայտարարեցին խորհուրդին պաշտօնական կազմութիւնը: Խորհուրդը, որ ժամանակաւոր իշխանութիւն պիտի ունենայ, պիտի պատրաստէ Իրաքի ընտրութիւնները, որոնք հաւանաբար պիտի կայանան մէկ տարիէ: Խորհուրդին պարտականութիւններէն պիտի ըլլայ նաեւ նշանակել նախարարներ եւ դիւանագէտներ, վաւերացնել պիտոստեան նախահաշիւներ, ինչպէս նա-

լ իր յանձնելու պահանջին: • ՄՈՍԿՈՒՄՅԻ մէջ ամերիկացի ղեւապանը յայտարարեց, որ Ուաշինգթոն Իրաքի մէջ ռուսական ղեւապանութեան դիւանագիտական կեդրոն չի նկատուել, հետեւաբար որե-

ւէ պատասխանատուութիւն չի ստանձնել անոր անձնակազմին ապահովութեան: Դեսպանը ըսաւ նաեւ, որ ամերիկեան ուժերը չեն արգելակել ռուս պաշտօնատարներուն աշխատանքը: (ԱՅՓ)

## ԻՐԱՔԻ ԿՈՐԻՉԱՅԻՆ ԵՆԹԱԴՐԵԱԼ ԾՐԱԳԻՐԻՆ ԳԾՈՎ ՄԻՍԱԼ ԱՄԲԱՍՏԱՆՈՒԹԵԱՆՅ ՀԱՄԱՐ «ՄԻ. ԱՅ. ԷՅ.» Ի ՏՆՕՐԷՆ ԹԵՆԸԹ ԻՆՔՉԻՆՔ ՅԱՆՅԱԻՈՐ ԿԸ ՆԿԱՏԷ, ԲԱՅՑ ՊՈՒՇ ԿԸ ՊԱՇՏՊԱՆԷ ՏՆՕՐԷՆԸ...

Միացեալ Նահանգներու նախագահ Ճորճ Պուշ Զարթովը Նահանգներու հրապարակաւ գործադիր կանցնեցաւ «Մի. Այ. Էյ.»-ի տնօրէն Ճորճ Թենըթի, որ ստանձնած էր պատասխանատուութիւնը Իրաքի կորիզային ենթակառուցումը ծրագրելու առնչուող սխալ ամբաստանութեան: Պուշ, որ ամերիկեան շրջապտոյտի մը ծիրէն ներս Նիւ Երկիր հասած էր, ըսաւ, որ մեծ վստահութիւն ունի «Մի. Այ. Էյ.»-ի մէջ գործող բոլոր անհատներուն հանդէպ: Պուշ աւելցուց, որ ուրախ է եւ գոհ, որ Թենըթի յամար մարդոց հետ կ'աշխատի անհատներուն յիմ յայտարարուած պատերազմը յաղթանակով աւարտելու համար: Թենըթ Ուրբաթ օր քաղաքական ուժեր մը պայթեցուց, երբ յայտարարեց, որ ինք մեղադրելի է այն սխալ տեղեկութիւններուն համար, որոնք Պուշ ներմուծած էր Յունուարին Գոնկրէսի միացեալ նիստին արտասանած տարեկան ճառին մէջ: Օրին, Պուշ իր խօսքին մէջ ըսած էր, որ փաստեր կան, որոնք կը հաստատեն, թէ Իրաք կորիզային գնէքերու պատրաստութեան ծառայող նիւթեր գնած է Ալֆրիդէն: Պուշ խօսքին մէջ նախագահութիւնը «Բրիտանիոյ կառավարութիւնը իմացած է, թէ Թենըթ չէշտեց, որ ինչեւէր փորձած է մեծ քանակութեամբ իւրանիում գնել Ալֆրիդէն», օրին բուական իրարանցում ստեղծած էր եւ կարգ մը մեկնաբաններու համար՝ արագացուցած էր Իրաքի դէմ պատերազմի որոշումը: Թենըթ չէշտեց, որ ինչեւէր փորձած էր իրաքի դէմ պատերազմը չիւրջադառնելու համար: Ան աւելցուց, որ նախագահը պատճառ չունէր կասկածելու, որովհետեւ վստահութիւն ունէր, որ տեղեկութիւնները ճիշդ են: Թենըթ ըսաւ նաեւ, որ ինք պատասխանատու է, որովհետեւ «Մի. Այ. Էյ.» վաւերացուցած էր տեղեկութիւնները, որոնք ըստ երեւոյթի սակայն փաստերու վրայ չէին հիմնուած: «Նիւ Երեք Թայմզ» հարց կու տայ, թէ ինչեւէր ամբաստանութիւնը (Իրաքի հանդէպ) ինչպէս տեղ գտած է Պուշի խօսքին մէջ, կամ արդե՞ք դիտումնաւոր կերպով ներմուծուած է խարեւր համար հանրային կար-



ծիքը: «Սպիտակ Տունը բացատրութիւններ ունի տալիք», կը գրէ օրաթերթը: Նորագոյն իրադարձութիւնները պատճառ դարձան, որ Պուշի ժողովրդականութիւնը նահանջ արձանագրէ: Երեք շաբաթ առաջ կազմակերպուած հարցախոյզ մը Պուշի ժողովրդականութիւնը կը գնէր 68 առ հարիւր վրայ, իսկ հիմա՝ 59: Հարցախոյզին մասնակցողներէն շատերը գոհ են Իրաքի ամերիկացի զինուորներու սպանութեան համար: Ուրիշները համոզուած են, որ Պուշ իսրայելի ժողովուրդը՝ զիտուեցուցուած են, որ Պուշ չափազանցելով Իրաքի սպանալիքը: Դեմոկրատները իրենց կարգին կը պահանջեն «գլուխներ դրոյթել» Պուշի կառավարութեան մէջ: Անոնք կը պահանջեն նաեւ անկախ հետազոտութիւն մը կատարել ստուգելու համար թէ՛ նախագահը խարած ու սխալ ուղղութեան վրայ դրած է ամերիկեան հանրային կարծիքն ու ժողովուրդը՝ Իրաքի պատերազմին նախօրեակին:



**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա.  
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ  
ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՄԲ  
ԱՐՄԵՆՈՑԱՄԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ  
ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՉ**

Ուրբաթ, 11 Յուլիս 2003ին, Արամ Ա. կաթողիկոսի նախագահությամբ Արմենոֆաթ իր տարեկան հանդիպումը ունեցավ Անթիլիասի մէջ: Առաջին անգամ ըլլալով յիշեալ հիմնարկը իր հանդիպումը կը կազմակերպէ Անթիլիասի մէջ, հրաւերով վեհափառ հայրապետին: Յայտնենք, որ Արմենոֆաթ զուիցերիական եկեղեցիներու եւ Կիլիկիոյ կաթողիկոսութեան միացեալ նախաձեռնութեամբ հիմնուած բարեփոխական կառոյց մըն է: Ան կը գործէ անլիք քան քսան տարիներէ ի վեր: Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան կողմէ կառոյցի յանձնախումբին մաս կը կազմեն տիկին Թեմի Փիրրի Սիմոնեան (ատենապետուհի), Ոսկերեան Արպուսանեան, Նապարթ Գարագաշեան եւ օրը. Արփի Զպուրճեան: Արմենոֆաթին նպատակն է օգտակար հանդիսանալ յատկապէս Արեւելի Ազգային ծերանոցին:

Անթիլիասի մէջ տեղի ունեցած ժողովի ընթացքին լայնօրէն քննարկուեցան կառոյցի տնտեսական ու յարաբերական գործունէութեան առնչուած հարցեր եւ առնուեցան համապատասխան որոշումներ յառաջիկայ տարուան համար: Զուիցերիայէն ժամանած Արմենոֆաթի անդամները ժողովի աւարտին այցելեցին մեր համայնքի կարգ մը բարեփոխական հաստատութիւններուն եւ Կիրակի օր Անթիլիասի մէջ ներկայ գտնուեցան Սուրբ եւ անմահ պատարագին:

**ՂԵՄԱՅԵՏ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԵ  
ՂԱՄԱՅՆՔԱՅՆՈՒԹԵԱՆ  
ԵՒ ԽՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ  
ԵՐԵՒՅԵՆԵՐԸ**

Ուժանիւթի եւ ջուրի հարցերու նախարար Այոլայ Հըմաձեան երէկ կող ուղղեց հանրային աշխատանքներու ծառայութեան ոլորտէն ներս գործող պաշտօնեաներուն՝ բարձրանալու համայնքային եւ յարանուանական աշխատանքներէն եւ համայնքներու միջեւ խորուձիւն դնելէն:

Հըմաձեան խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրիի անունով գգուշացուց համայնքային ծառայութիւն ստեղծող եւ խորուձիւն կիրարկող կողմերը, շեշտելով, որ ան կը վնասէ ոչ միայն քաղաքացիին, այլ նաեւ՝ երկրին:


**ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ**

● **ՔՈՒՒՅԹ**.- Քուէյթի էմիրը երէկ արտաքին գործոց նախարար շէյխ Սապահ Ահմէտը վարչապետ նշանակած է: Ան կը փոխարինէ շէյխ Սաատ Ապտալա Սալէմ Սապահը, որ 1978էն ի վեր վարչապետ է: Այս վերջինը կը պահէ գահաժառանգ իշխանի իր դերը:

● **ՔԱԶԱՊԼԱՆՔԱ**.- Մարտի մէջ, իսլամական խմբակի մը ենթադրեալ 10 անդամներուն դէմ մահաձիռ արձակուած է Ուրբաթ գիշեր: Կ'ենթադրուի, թէ խմբակը կապ ունի Մալիս 16ի անձնասպանական գործողութիւններուն, որոնք 44 զոհ խլած էին:

● **ԳԱՀԻՐԻ**.- Եգիպտոսի մէջ շարժապետներին տեղի ունեցած 2 տարբեր արկածներ 27 զոհ խլած են: ՃԱՄՈՒ (ՀՆԴԿԱՍՍԱՆ).- Անուուպն 16 զոհ արձանագրուած է երէկ, հնդկական Քաշմիրի մէջ, երբ օթոպիս մը գետի մը մէջ ինկած է:

● **ՊԱՄՊԸՐԿ**.- Գերմանիոյ Պամպըրկ քաղաքին մէջ տեղի ունեցած ահուկ մը ընթացքին, խաղաղք արջուկ մը («Թետի Պէր») 250 հազար եւրոյի ծախուած է: «Փարայպա Թուրմալին» արջը իւրայայտուկ է, որովհետեւ 12,68 քարաթ գոհար մը կը կրէ, այդ պատճառով ալ անոր տրուած է նշեալ անունը:



Իրաքեան պատերազմին տուն տուող պատճառներուն շուրջ եղած տարակարծութիւնները, կասկածները եւ իրարու հակասող յայտարարութիւնները իրաքի մէջ ամերիկեան ուժերուն դէմ սաստկացող յարձակումները եւ Ապպասի ու Շարոնի Ուաշինկթըն այցելութիւնները կը հանդիսանան տեղական մասնաւոր առաջին էջերը գրաւող լուրերը:

Տեղական լուրերու կարգին, թերթերը լուսարձակի տակ առած են «Մատինա» դրամատան շուրջ զարգացող հարցերը, ինչպէս նաեւ կառավարութեան մէջ եղած տարակարծութիւններն ու յարաւորութիւնները:

Իրաքեան վարչապետներուն մասին «Նահար» օրաթերթը գրած է, թէ Միացեալ Նահանգներու Օերակոյտը Պուշէն կը պահանջէ իրաքի մէջ լայն դերակատարութիւն շնորհել ՄԱԿին եւ ՕՊՍԵՆին: Ըստ թերթին, իւրանիւմի մասին տեղեկագիրը ամերիկեան տագնապի մը դուռ բանայ, իսկ Թեմէթ կը խոստովանի, որ «Մի. Այ. Էյ.» որոշումները գործած է:

Ըստ «Մաֆիր»ի, ՄԱԿի ներկայացուցիչ Տի Մելիօ կ'ուղղուի Սէուտական Արաբիա, ապա՝ Սուրիա եւ Իրան: Պուշէն իրաքի պատերազմին պատասխանատուութիւնը եւ կ'ըսէ, թէ անոնք համաձայն գտնուեցան իր պատգամին եւ տեղեկութիւններուն, գրած է օրաթերթը:

Թերթը նշած է, թէ Իրանի նախկին նախագահ Ռաֆիկ Նաճաֆի իր անցած տարիներու ընթացքին իրաքի մէջ կը գտնուի իրաքի մէջ:

«Անուար»ի համաձայն, Օերակոյտը Պուշէն կը պահանջէ վերատեսութեան ենթարկել իրաքի իրավիճակը:

Ըստ թերթին, Սահաֆ Ապու Տապիէն կը յայտարարէ, որ «պատգամներ խառն են եւ անոնց մէջ թէ տիրութիւն եւ թէ յոյս կայ»:

Փոխարձակման պատճառով իրանեան կ'ուղղուին Սպիտակ

Տան եւ ամերիկեան գաղտնի սպասարկութեան միջեւ:

«Լիուս» գրած է, թէ յարձակումները իսկական տագնապ մը կը ստեղծեն եւ Տրէքս կը խոստովանի, թէ ամերիկեան ուժերը օրական շուրջ 52 յարձակումներու կ'ենթարկուին: Պուշ «Մի. Այ. Էյ.»ը կ'ամբաստանէ կինք շուրջեցնելու յանցանքին համար, իսկ Օերակոյտը կոչ կ'ուղղէ միջազգային ուժերու օգնութեան դիմելու:

«Մուսթափալ» օրաթերթը դիտել տուած է, թէ Սաուտում կը փորձէ կրկին իշխել իրաքի վրայ, իսկ Սահաֆ Միացեալ Էմիրութիւններ կը մեկնի, իրաք վերադառնալու նախատեսութեամբ:

Ըստ թերթին, Տը Մելիօ եւ Սալամէ իրաքի ապագան կը քննարկեն նախագահ Ասատի հետ:

Պաղեստինեան իրադարձութիւններուն մասին «Մաֆիր» գրած է, թէ Եգիպտոսի գաղտնի սպասարկութեան ընդհանուր պետ Օմար Սալաման Ռաւալա ուղղութեամբ պաղեստինեան ներքին անհամաձայնութիւնները հարթելու նպատակով: Մաժմո բանտին մէջ գերիները կրկին հացադուլի կը դիմեն, դիտել տուած է օրաթերթը:

Թերթին համաձայն, Շարոն յառաջիկայ շաբաթ Ուաշինկթըն պիտի մեկնի, իսկ ամառուան վերջը անոր պիտի հետեւի Ապու Մալկուէ: Եսալուն կը սպասուի կրկին պատերազմ պայթեցնել եւ պաղեստինցիները տագնապի մատնել:

«Տիար» գրած է, թէ Շարոն յայտարարեց, թէ բոլոր կողմերը պէտք է օժանդակեն Ապու Մալկուէին:

«Նահար» դիտել տուած է, թէ Իսրայէլ կը սպառնայ զինեալ յարձակումներու դիմել Կապի մէջ, եթէ պատեսութեան կազմակերպութիւնները չի նախապի չըլլան:

«Լիուս»ի համաձայն, Իսրայէլ սպառնալիքներ կ'ուղղէ Կապ ներխուժելու եւ եգիպտական պատուիրակութիւնը նոր առաքելութեամբ շրջան կը հասնի:

Այլ լուրերու կարգին «Լիուս» նշած է, թէ Իրանի նախկին նախագահ Ռաֆիկ Նաճաֆի յայտնեց, որ վերջին ցուցերն ու իրադարձութիւնները «պատանեկան» են եւ նշած է, թէ Միացեալ Նահանգներ իրաքի մէջ կը ստանան այն ինչին, որ արժանի են:

«Մաֆիր»ի համաձայն, Պրինսթոնէն է, թէ Սուրիան հաշուետուութեան կանչելու հարցը տակաւին պիտի չներկայացուի եւ անկէ կը պահանջուի հիմնական փոփոխութիւններ կատարել:

Ըստ «Քիֆահ Արապի»ի, պատկան երկիրներու ղեկավարներու բացակայութեամբ գումարուած Մապոթի խորհրդածողովին ընթացքին յայտարարուած է, թէ ժողովը կը մերժէ պատերազմն ու աղքատութիւնը եւ կը պահանջէ խաղաղութիւն ամբողջ աշխարհին մէջ:

Տեղական իրադարձութիւններուն ակնարկելով «Մաֆիր» գրած է, թէ հարցաքննութիւն կատարող յանձնախումբը հաստատեց, որ «Մատինա» դրամատան մէջ հապարատու տղարներու գողութիւն տեղի ունեցած է:

Ըստ «Լիուս»ի, «Մատինա» դրամատան հարցը դատարանին յանձնուեցաւ եւ անկա բաւական բարդ կը թուի: «Կեդրոնական Դրամատունը կ'ամբաստանէ Ապու Այաշը, Քայաթուն ու այլ 14 անձեր գողութիւններ, կեղծարարութիւններ կատարած ըլլալու յանցանքով եւ անոնց հաշիւներուն գաղտնի անալոյ պարագան կը վերցնէ»:

«Նահար» գրած է, թէ Կեդրոնական Դրամատունը կը յայտնէ, թէ 21 անձեր գործակցաբար միլիոնաւոր տղարներ կողոպտած են:

«Անուար» լուսարձակի տակ առած է այն պարագան, թէ իշխանութեան պետերը անհամաձայն են ամէն ինչի մէջ, բացի խոստումներ տալու մէջ: Ըստ թերթին, նախագահ Կոր. Լառուս ընդվզած է նախարարաց խորհուրդին ընթացքին իրեն ուղղուած անուղղակի պատգամներէն:

**ԱՖՀԻԼ AFHIL**

**ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐՈՒ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ**

**RENT AND SALE**

**AT HOME**

- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

**HOME MEDICAL EQUIPMENT SERVICES**

- Over Bed Table
- All Kinds Of Oxygen

We Also Provide

- Laboratory service.
- Physiotherapist
- Nurses Aids
- P.T.S. (AMBULANCE)

**ՅՈՒՑԱՍՐԱԸ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՁԸՐ ԳՐԱՆԵՆԵԱԿ՝ ԱՖՀԻԼ, ԱՖԵՏԻ ԶԵՆԸ, Բ. ՅՐԿ ԵՏՈ. (02) 242536/7**

**NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.**

**ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ**

Հայ Կաթողիկէ վարժարաններու աշակերտները Հերմիէ Նիւրբէրքեան (Մեարոպեան), Նաթալի Պէժէքեան (Ս. Ագնէս), Սելին Հալիպեան (Հոփիսիմեանց), Սարին Գրիգորեան (Գ. Հարպոյեան) եւ Սեւան Չէյրունեան (Միլիթարեան) շահեցան Հայաստան այցելութեան Հայ Կաթողիկէ պատրիարքական նորահաստատ մրցանակը, որ կը շնորհուի Հայ Կաթողիկէ նախակրթարաններու աւարտական դասարաններու մէջ հայերէնի եւ հայոց պատմութեան բարձրագոյն նիշերը ապահոված աշակերտներուն:

Մրցանակակիրները Հայրենիք մեկնեցան Կիրակի, 13 Յուլիսին եւ պիտի վերադառնան Երեք շաբաթ ետք. անոնք առիթ պիտի ունենան մօտէն ճանչնալու իրենց պայանական երկիրը, անոր մշակոյթն ու հայրենի ժողովուրդի առօրեան: Անոնք պիտի հիւրընկալուին «Անարատ Յղութեան Հայ Քոյրերու Միաբանութեան» Ծաղկածորի ճամբարը:

Այսուհետեւ ամէն տարի շնորհուելիք այս մրցանակով, Հայ Կաթողիկէ պատրիարքութիւնը կը նպատակադրէ հայ կաթողիկէ վարժարաններուն մէջ քաջալերել հայագիտական նիւթերու ուսուցումը, ինչպէս նաեւ նպաստել Սփիւռքի եւ Հայաստանի պատանի հայորդիներու միջեւ յարաբերութիւններու վարգացման:

**ԴԻՒՆ**  
ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

**Balkan Holidays**  
TRANSLITEX TOURS

ԴԵՊԻ ՎԱՌԵԱ ԵՐՁԱՊՏՈՅՏՆԵՐՈՒ 36 ՏԱՐՈՒԱՆ ՓՈՐՉԱՌՈՒԹԻՒՆ

**Varna Summer**

245\$ սկսեալ

24 ժողովուրդը կազարեց մեր սեփական օդանայնով նուազագոյն սակեր 245\$ էն սկսեալ (Ներառեալ շրջապտույթին հիմնական ծախսերը)

**Balkan Holidays**  
VARNA EXPERT NO. 1  
Look after No. 1. Let No. 1 Look after you.  
CORNICH MAZRAA WAKF ROUM CENTER - BANK AUDI  
TEL: 1/304553 - 304563 FAX: 961/310424 BEIRUT - LEBANON

**FUEL CARDը գործածեցէք**

**Պենզինի գնման, ինչպէս նաեւ ձեր ինքնաշարժներուն իւրը փոխելու կամ զանոնք լուալու պարագային:**

**Երբ մագուր պիտի գնէք, գործածեցէք FUEL CARDը՝ հեռաձայնելով 04 / 715111 - 222 - 333 թիւերուն:**

- ▶ MANAR - Տրա
- ▶ ՍՄՐԳԻՍԵԱՆ - Պուրճ Գանուտ
- ▶ BASSIL - Տրա, կամուրջի մօտ
- ▶ AKEL եւ BASSIL - Տրա, «Քրեմի Լիպանէ»ի մօտ
- ▶ SPEED - Գանքաշ, Կալէրի հոթիլ
- ▶ ԳՅՅՎԿԱՆ ԿՅՅՐԱՆ - «Ալմազ»
- ▶ MALLAH - Անթիլիաս, կաթողիկոսարանի դիմաց
- ▶ MALLAH - Գարեթ Դաուարնէ
- ▶ MALLAH - Պալիմ
- ▶ MALLAH - Ժալ էլ Տիպի մայրուղի
- ▶ CORAL - Էշրեֆի, Ս. Յակոբ Եկեղեցու մօտ
- ▶ SAAD - Մար Միսայէլ
- ▶ SPEED - Նահր, «Փեօօ» ընկերութեան մօտ
- ▶ PHOENICIA - Այնճարի մուտքին
- ▶ MALLAH - Պապուտե













